ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.19. Արևելյան Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

• • •

Արևելյան Ասիան աչքի է ընկնում մակերևույթի բազմազանությամբ: Արևմտյան մասում հիմնականում լեռներ և սարահարթեր են՝ Հիմալայների արևելյան լանջերը, Կունլուն, Մոնղոլական Ալթայ և այլ լեռնաշղթաներ, աշխարհի ամենաընդարձակ Տիբեթի բարձրավանդակը, Գոբի, Տակլա Մական անապատային սարահարթերը: Արևելյան Ասիան սառնամանիքների ու սառցադաշտերի, հաճախակի ու ավերիչ երկրաշարժերի, խիստ ցամաքային ու չորային կլիմայի, այլ կերպ ասած՝ մարդու կյանքի համար անբարենպաստ ու վտանգավոր «երկիր է»:

• • •

Տարածաշրջանի արևելյան մասում մակերևույթը հիմնականում հարթավայրային է, որտեղ առավել խոշորը **Չինական Մեծ դաշտավայրն** է: Սա աշխարհի խոշորագույն երկրագործական շրջաններից է: Յանցզի և Հուանհե գետերի հովիտներում ձևավորվել է աշխարհի ամենախտաբնակ արեալը՝ տարածման մարզը: Ինչը պայմանավորված է բարենպաստ հողակլիմայական պայմաններով և պատմականորեն ձևավորված մարգային հողագործության տիպով, աշխատատար բուսաբուծությամբ, բնակեցման ժամանակով, բնական աճի առանձնահատկություններով: Յանցզի և Հուանհե գետերը գիտության մեջ հայտնի են քաղաքակրթության մեծ գետեր անունով:

• • •

Հյուսիսում սահմանային է Ամուր գետը՝ Ուսուրի վտակով: Չորային շրջաններում կան ժամանակավոր հոսք ունեցող ոչ մշտահոս, բայց խոշոր գետեր, օրինակ Թարիմը: Լճերից՝ Պոյանխուն, Դունտինխուն քաղցրահամ

են իսկ Կուկունորը, Լոբնորը՝ աղի և «թափառող» (վերհիշեք այդ տեսակը):

Արևելյան Ասիան օգտակար հանածոների հետախուզված պաշարներով աշխարհի հարուստ տարածաշրջաններից է: Հարուստ է վառելիքային, մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոներով: Վառելիքային ռեսուրսներից առկա են ածուխ, նավթ, այրվող թերթաքար: Հարուստ է երկաթաքարի, անագի, մանգանի, բազմամետաղների, թեթև և ռադիոակտիվ մետաղների պաշարներով:

• • •

Ազգային փոքրամասնություններ են տիբեթցիները, մանջուրները, ույղուրները: Չինաստանում ապրող ույղուրները և մանջուրները պատկանում են ալթայան լեզվաընտանիքին, ույղուրները՝ թյուրքական խմբին, մանջուրները՝ մոնղոլական: Արևելյան Ասիայում բնակչության բնական աճի ցուցանիշն աշխարհի միջին ցուցանիշից ցածր է՝ 0,13%, բարձր է միայն Մոնղոլիայում: Բացի ԿԺԴՀ-ից և Մոնղոլիայից, մյուս երկրներում բնական աճը բացասական է (ինչու՞):

Բնակչության միջին խտությունը բարձր է՝ շուրջ 310 մարդ քառ. կմ: Աշխարհի խտաբնակ արեալներից մեկն է: Չափազանց խիտ են բնակեցված Ճապոնական երեք կղզիները, Թայվանը, Կորեական թերակղզին, Հուանհե, Յանցզի, Սիցզյան գետերի միջին և ստորին հոսանքների շրջանները՝ 1500 մարդ քառ. կմ: Նոսր են բնակեցված լեռնային շրջանները (Տիբեթը և այլն), Մոնղոլիան՝ աշխարհի նոսր բնակեցված երկրներից է: Արագ բնակեցվում են Չինաստանի չորային շրջանները:

• • •

Մոնղոլիան ինչպես միշտ հանքարդյունաբերության, գյուղատնտեսական հումքի վերամշակման երկիր է: ԿԺԴՀ-ն ապրում է խորը տնտեսական ճգնաժամ: Այն ավելի շատ ռազմականացված (միլիտարիզացված) պետություն է: Արևելյան Ասիան ՀՆԱ-ի ծավալով զիջում է միայն Հյուսիսային Ամերիկային: Նրա զարգացման տեմպերը ամենաբարձրն են աշխարհում:

Տնտեսության զարգացման համար Արևելյան Ասիան ունի բարենպաստ բնական պայմաններ և ռեսուրսներ: Տարածաշրջանն աշխարհում առաջատար է ածխի հանույթով, սև մետաղաձուլությամբ, մեքենաշինության մի շարք արտադրատեսակների՝ ավտոմոբիլների, ծովային խոշոր նավերի, կենցաղային տեխնիկայի, էլեկտրոնիկայի ու կապի միջոցների, տեքստիլ արդյունաբերության, հացահատիկի համախառն բերքով, խոզերի գլխաքանակով, ձկան և ծովային այլ կենդանիների որսով, ծովային գյուղատն-

տեսությամբ (մարիկուլտուրա, աքվակուլտուրա) և բազմաթիվ այլ արտադ-
րությունների գծով:

• • •

Արևելյան Ասիայի ափերը ողողում են Խաղաղ Օվկիանոսի մասերը կազ-
մող Ճապոնական կամ Արևելյան, Ներքին Ճապոնական, Դեղին, Արևելա-
չինական, Հարավչինական ծովերի ու նեղուցների ջրերը: Միակ ներցամա-
քային, խորքային, անբարենպաստ դիրք ունեցող պետությունը Մոնղոլիան
է: Մոնղոլիան տարածքով երկրորդ խոշոր պետությունն է աշխարհում
(Ղազախստանից հետո), որը ելք չունի դեպի ծով, ինչն էապես խանգարել
է նրա զարգացմանը:

• • •

Բնակչությունը: Արևելյան Ասիայի, երկրները բացի Ճապոնիայից, ու-
նեն կառավարման հանրապետական ձև: Ճապոնիան սահմանադրական
միապետություն՝ կայսրություն է: Ճապոնիան և Կորեաները միազգ, ունի-
տար պետություններ են: ԿԺԴՀ-ում ամուր հիմքի վրա է սոցիալիստական
տոտալիտար (ամբողջատիրական) քաղաքական ռեժիմը: Չինաստանը ժո-
ղովրդական հանրապետություն է:

• • •

Տարածաշրջանի աշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկութ-
յուններից մեկը երկրների ելքն է Խաղաղ օվկիանոս:

Աշխարհագրական դիրքի (ավելի շատ ՔԱԴ-ի) կարևոր առանձնահատ-
կությունը հարևանային դիրքն է, որը հաջողությամբ օգտագործվում է ՌԴ-ի,
Չինաստանի, ԿԺԴՀ-ի և Մոնղոլիայի հետ ունեցած հարաբերություններում:

• • •

Հյուսիսում և հյուսիս-արևմուտքում կլիման չորային է և խիստ ցամաքա-
յին, որտեղ առավելապես տարածված են կիսաանապատներ և անապատ-
ներ: Տիբեթի կլիման անվանում են «լուսնային»: Բանն այն է, որ Տիբեթում
ցերեկը օդը արագ տաքանում է, գիշերը՝ ցրտում, և ինչպես լուսնի վրա է,
մեծ է ջերմաստիճանների օրական ամպլիտուդը՝ լայնույթը:

Գետային ցանցը խիստ անհավասարաչափ է տեղաբաշխված: Տիբեթի
սառցադաշտերից են սկիզբ առնում Ասիայի խոշորագույն ու ջրառատ գե-

տերը՝ **Յանցզին**, **Հուանհեն**, **Սիցզյանը**, որոնք միջին և ստորին հոսանք-ներում նավարկելի են, ունեն նաև ոռոգիչ և էներգետիկ նշանակություն: Մուսսոնային կլիմայի շնորհիվ սրանք ունեն ամառային հորդացումների ռեժիմ:

• • •

Արևելյան Ասիայում ապրում է ավելի քան 1640 մլն մարդ, երկրագն-դի բնակչության 23%-ը, որոնք պատկանում են մոնղոլոիդ ռասային և հիմնականում՝ չին-տիբեթական լեզվաընտանիքին: Ճապոներենը և կորեերենը դեռևս ներառված չեն ոչ մի լեզվախմբի մեջ, ինչը պայմանա-վորված է լեզվական յուրահատկություններով:

Տարածաշրջանի բնակչությունը բազմազգ է: Միայն Չինաստանում ապրում է ավելի քան 50 էթնոս: Մեծաթիվ են չինացիները, ճապոնացիներ-ը, կորեացիները:

• • •

Չինաստանը աշխարհում առաջատար է արդյունաբերության և գյու-ղատնտեսության արտադրության ծավալներով և տնտեսության համախառն արտադրանքի ծավալով զիջում է միայն ԱՄՆ-ին: